«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 5
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 5
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԵՆԹԱՉԱՓԵՐ 6
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ .. 6
ԲԱԺԻՆ 6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ) 7
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 8
ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 11
ԲԱԺԻՆ 9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12
ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13
ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ 15
ԲԱԺԻՆ 12. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ 17
ԲԱԺԻՆ 13. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ 20
ԲԱԺԻՆ 14. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ 20
ԲԱԺԻՆ 15. ԾԱՆՈՒՑՈՒՄ 21
ԲԱԺԻՆ 16. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 21
ԲԱԺԻՆ 17. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 22

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1"1. Սույն «Մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1"2. Մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1"3. Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ապահովագրող) կարող է ապահովագրել ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատվության ռիսկը, որոնք իրականացնում են մասնագիտական գործունեություն, և որոնք ունեն մասնագիտական գործունեության կոնկրետ տեսակի համար լիցենզիա կամ թույլտվություն:

1"4. Կանոնները հանդիսանում են մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1"5. Կանոնների և Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր ձևով և հաստատվում Ապահովագրողի և Ապահովադրի կողմից (այսուհետ նաև Պայմանագրի կողմեր):

1"6. Ապահովադիրների հետ կնքված ապահովագրության պայմանագրով կարող են ապահովագրվել նրանց բոլոր կամ առանձին աշխատակիցները (Ապահովագրված անձ) մասնագիտական պատասխանատվության ռիսկից՝ համաձայն ապահովագրության պայմանագրին կցվող ցանկի:

1"7. Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Կանոնների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

1"8. Կանոններում օգտագործվող հասկացությունները՝

- Ապահովագրող՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ, որը որոշակի վճարի (ապահովագրավճար) դիմաց իր վրա է վերցնում Ապահովադրի պատասխանատվության ռիսկը (նյութական հետևանքները) և ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովադրին հատուցում է վնասը՝ սահմանված կարգով ապահովագրական հատուցում վճարելու միջոցով:
- Ապահովադիր՝ ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ:
- Ապահովադրի աշխատակից՝ անձ, որն Ապահովադրի հետ գտնվում է աշխատանքային կամ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ՝ համաձայն կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի:
- Ապահովագրված անձ՝ իրավական ակտերով սահմանված կարգով իրենց հաճախորդներին մասնագիտական ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնող անձ, որի մասնագիտական պատասխանատվությունը ապահովագրված է

Կանոնների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրում և որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա:

• Շահառու՝ Պայմանագրով նախատեսված՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, որին կարող է վնաս պատճառվել և որի առջև ապահովագրված անձը պետք է համապատասխան պատասխանատվություն կրի, եթե անգամ Պայմանագիրը կնքվել է հօգուտ այլ անձի կամ Պայմանագրում նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել:

• Ապահովագրական գումար (ապահովագրական ծածկույթ)՝ ապահովադրի և ապահովագրողի համաձայնությամբ որոշված՝ դրամական արտահայտությամբ գումար, որի շրջանակներում Ապահովագրողը կրում է պատասխանատվություն:

• Ապահովագրական գումարի ենթաչափեր՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում մեկ ապահովագրական պատահարի համար սահմանվող ենթաչափեր (հատուցման ենթակա առավելագույն չափեր):

• Ապահովագրական դեպք կամ ապահովագրական պատահար՝ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի կողմից իր հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորության՝ այն է պատշաճ կերպով գրավոր ձևակերպված պայմանագրով իր հաճախորդներին մասնագիտական ծառայությունների մատուցում և իր մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում ակամայից թույլ տրված անզգուշություն, սխալ, չնախատեսված բացթողում, որն առաջացրել է Ապահովագրված անձի հաճախորդների (շահառուների) Կանոններով նախատեսված վնասներ և որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հիմք է հանդիսանում հաճախորդի կողմից Ապահովագրված անձի նկատմամբ վնասի փոխհատուցման պահանջի համար:

• Մասնագետ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ (անհատ ձեռնարկատեր), որն օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն զբաղվում է համապատասխան մասնագիտական գործունեությամբ:

• Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումարն է:

• Չհատուցվող գումար՝ վնասի չափ, որը չի հատուցվում Ապահովագրողի կողմից, և որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի տեսքով կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:

• Ռետրոակտիվ ամսաթիվ՝ Պայմանագրի պայման, համաձայն որի Ապահովագրողը կրում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը, սակայն նրանց տեղի ունենալու մասին հայտնել են Ապահովագրողին Պայմանագրի գործողության ընթացքում:

• Հայցի տեղեկացման դրույթ՝ ապահովագրության (ծածկույթի) պայման, համաձայն որի Ապահովագրողը կրում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, և որոնց մասին Ապահովադիրը տեղեկացվել է Պայմանագրի գործողության ժամանակ, և նույն ժամանակում պատահարի մասին նա տեղեկացրել է Ապահովագրողին:

• Պատահարի տեղեկացման դրույթ՝ ապահովագրության (ծածկույթի) պայման, համաձայն որի Ապահովագրողը կրում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն այն ապահովագրման պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո/սկսած, սակայն նրանց տեղի ունենալու

մասին հայտնել են Ապահովադրին և Ապահովագրողին ցանկացած ժամանակ, այդ թվում՝ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

• Անփութություն՝ Ապահովադրի սխալները, բացթողումները, անգործությունը, որոնք հետևանք են այդ անձի՝ ինչպես ոչ բավարար ուշադրության, այնպես էլ ոչ բավարար փորձառության:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2"1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող Ապահովադրի գույքային շահերը՝ կապված իր (իր աշխատակիցների) կողմից Պայմանագրում նշված մասնագիտական գործունեություն իրականացնելու հետևանքով Շահառուի գույքային շահերին հասցված վնասի հետ, պայմանով, որ մասնագիտական գործունեությունն իրականացվել է ունենալով համապատասխան գիտելիքներ, փորձ և հմտություն և/կամ լիցենզիա:

2"2. Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունն առաջանում է, եթե՝

• Շահառուի գույքային շահերին հասցված վնասը ուղիղ պատճառահետևանքային կապ ունի Ապահովադրի՝ որպես մասնագիտական ծառայություն կամ աշխատանքներ մատուցող անձի գործունեության իրականացման հետ,

• Շահառուի գույքային շահերին հասցված վնասը պատճառված է Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում և Պայմանագրում նշված ժամանակահատվածում,

• Վնասի պատճառման իրադարձությունը տեղի է ունեցել այն գործունեության ընթացքում, որի համար Ապահովադիրն ունի համապատասխան լիցենզիա և/կամ օրենքով նախատեսված այլ թույլտվություն:

2"3. Ընդ որում Կանոնների 2.2 կետում նշված պայմաններում հատուցվում է Շահառուին պատճառված այն վնասը, որը ծագել է Ապահովադրի կողմից ոչ ճիշտ, ոչ օբյեկտիվ կամ ոչ լրիվ (թերի) մասնագիտական պարտականության կատարման արդյունքում, որը Ապահովադրի կանխամտածված և դիտավորյալ գործունեության արդյունք չէ և, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, այդ վնասը հատուցելու պարտավորության հանգամանքը հաստատվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ):

2"4. Ապահովագրողը նաև վճարում է դատական գործընթացի հետ կապված ծախսերը, պայմանով, որ դա նախորոք համաձայնեցվել է Ապահովագրողի հետ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

3"1. Ապահովագրական ռիսկ է համարվում Ապահովադրի մասնագիտական գործունեություն իրականացնելու հետ կապված Շահառուի գույքային շահերին հասցված հավանական վնասը, որի ի հայտ գալու հետ կապված իրականացվում է Կանոններով նախատեսված ապահովագրությունը:

3"2. Կանոններով ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադրի կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելու հետևանքով Շահառուին հասցված վնասի համար պատասխանատվություն առաջացնող փաստը, որը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, հաստատված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ) և որի վրա հասնելու հետևանքով սկիզբ է առնում ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

3"3. Մեկ պատահարի հետևանքով մի քանի Շահառուներին հասցված վնասը համարվում է մեկ ապահովագրական պատահար:

3"4. Կանոնների համաձայն իրականացված ապահովագրությունը տարածվում է բացառապես Պայմանագրի գործողության ժամանակահատվածում վնաս հասցնելու դեպքերի վրա, անգամ այն դեպքում, երբ վնասը հայտնաբերվել է Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո:

3"5. Եթե վնաս պատճառելու դեպքը, որը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում, վրա է հասել կամ գործողության ընթացքում էր մինչ Պայմանագրի կնքումը, ապահովագրական հատուցումը ենթակա է վճարման միայն այն դեպքում, եթե պայմանագրի կնքման օրվա դրությամբ Ապահովադրին ոչինչ հատնի չէր և չէր կարող հայտնի լինել այն հանգամանքների (պատճառների) մասին, որոնք հանգեցրել են վնասի առաջացմանը և Պայմանագիրը թողարկված է Ռետրոակտիվ ամսաթվով:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԵՆԹԱՉԱՓԵՐ

4"1. Ապահովագրական գումարը որոշվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4"2. Պայմանագրով կարող են նշվել մեկ ապահովագրական պատահարով հատուցման ենթակա առավելագույն չափեր՝ ապահովագրական գումարի ենթաչափեր: Ընդ որում, եթե այդպիսի դեպքերում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացել են մեկից ավելի վնասներ, ապա դրանք միավորվում և դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահարի հետևանք: Եթե Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի ենթաչափը չի բավարարում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած մի քանի վնասների հատուցման համար, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցումը յուրաքանչյուր վնասի գծով իրականացնում է վնասի մի մասի չափով՝ ընդհանուր վնասների մեջ տվյալ վնասի համամասնությամբ՝ մասհանելով նաև Պայմանագրում սահմանված չհատուցվող գումարի չափը: Պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական գումարի ենթաչափերը որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կարող են սահմանվել ինչպես առանձին օբյեկտների գծով, այնպես էլ մեկ ապահովագրական պատահարի համար:

4"3. Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը Ապահովագրողի կողմից իրականացված ապահովագրական հատուցմամբ պայմանավորված նվազման դեպքում կարող է Ապահովադրի ցանկությամբ վերականգնվել կամ լրացվել՝ լրացուցիչ ապահովագրավճարի մուծմամբ: Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

5"1. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

5"2. Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող Պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ ռիսկի համար սահմանած տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կարող են կիրառվել Ընկերության կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

5"3. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

5"4. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին (այդ թվում ապահովագրական գործակալին), իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին:

5"5. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

5"6. Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

5"7. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

5"8. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

5"9. Եթե ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադրին ծանուցելու:

ԲԱԺԻՆ 6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

6"1. Պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանշիզա):

6"2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

6"3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը,

իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

6"4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

7"1. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով:

7"2. Պայմանագիրը կարող է կնքվել միայն մասնագիտական գործունեություն իրականացնելու լիցենզիայի կամ թույլատվության կամ աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակահատվածում գործողության ժամանակահատվածի համար:

7"3. Պայմանագիր կնքելու համար Ապահովադիրն Ապահովագրողին պետք է ներկայացնի՝

ա) գրավոր կամ բանավոր դիմում, որտեղ պետք է ներառված լինի տեղեկատվություն՝

- ապահովագրական ռիսկերի վերաբերյալ,

- ապահովագրական գումարի չափի և ապահովագրական գումարի ենթաչափերի վերաբերյալ,

- ապահովագրության ժամկետի վերաբերյալ.

բ) իրավաբանական անձի (անհատ ձեռներեցի) պետական ռեգիստրի վկայագրի պատճենը,

գ) լիցենզիայի կամ մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքի այլ փաստաթղթի պատճենը,

դ) մասնագիտական գործունեության իրականացման պայմանագրի պատճենը (այն Պայմանագրի համար, որում ապահովագրության օբյեկտ է համարվում առանձին մասնագիտական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված ռիսկը) կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) տիպային մասնագիտական ծառայությունների մատուցման պայմանագիրը (այն Պայմանագրերի համար, որտեղ ապահովագրության օբյեկտ է համարվում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում կնքված մի շարք մասնագիտական ծառայությունների մատուցման պայմանագրեր),

ե) Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցների ցուցակը (համապատասխան կրթությամբ ոչ պակաս, քան մեկ մասնագիտական ծառայություն իրականացնող անձ, որի համար Ապահովադրի (Ապահովագրված անձի) կազմակերպությունը հանդիսանում է մշտական աշխատատեղ), որտեղ նշված է՝

- անուն, ազգանուն, հայրանունը,

- լիցենզիայի համարը և տրման ամսաթիվը« գործողության ժամկետը, որը հավաստում է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքը,

- պաշտոնը,

- համապատասխան մասնագիտական գործունեությամբ զբաղվելու ստաժը:

7"4. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար.

- Ապահովադրի (Ապահովագրված անձի) դեմ ներկայացված դատական հայցերը և դրանց վերջնական լուծումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

- գույքային հայցապահանջների վերաբերյալ, որում անհրաժեշտ է նշել ընդհանուր վնասների ծավալը՝ կապված վերջին 3 տարիների ընթացքում մասնագիտական գործունեության հետևանքով վնասի հատուցման համար կատարված վճարումների կամ վճարման ենթակա գումարների հետ,

7"5. Դիմումի մեջ նշված տվյալների իսկության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Դիմումի մեջ Ապահովադրի կողմից ոչ ճիշտ տվյալների շարադրման դեպքում, Ապահովագրողը, ապահովագրական դեպքի վրա հասնելու պարագայում, ազատվում է ապահովագրական հատուցումը վճարելու պարտավորության կատարումից:

7"6. Եթե Կանոնների 7.3 կետում նշված տեղեկատվությունը ներառվում է Պայմանագրում, ապա Ապահովագրողն ապահովագրությունը կարող է իրականացնել Ապահովադրի (Ապահովագրված անձի) բանավոր դիմումի հիման վրա:

7"7. Ապահովագրողը, ելնելով որոշակի հանգամանքներից, կարող է նաև կրճատել կամ մեծացնել իրեն ներկայացվող տեղեկությունների ցանկը և համապատասխանաբար Ապահովադրին տրամադրել Պայմանագիր՝ Կանոնների 7.3 կետում նշված տեղեկատվությունից պակաս կամ ավել տեղեկատվության ներկայացմամբ:

7"8. Ապահովագրողն իրավունք ունի մերժել Պայմանագրի կնքումը, եթե՝

ա) Պայմանագրի կնքման պահին Մասնագետը չունի համապատասխան մասնագիտական գործունեություն իրականացնելու համար իրավասու մարմինների կողմից տրված լիցենզիա,

բ) համապատասխան մասնագիտական գործունեություն իրականացնելու լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև այն պահը, երբ Ապահովադիրը Պայմանագիր հավակնում է ստանալ,

գ) Մասնագետը կնքել է Ապահովագրողի համապատասխան մասնագիտական ծառայության մատուցման պայմանագիր,

դ) Մասնագետը չի ներկայացրել Ապահովագրողի պահանջով անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ,

ե) Մասնագետն իր կողմից ծառայություններ սպառողի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի կերպով հանդիսանում է հիմնադիր, մասնակից, սեփականատեր, բաժնետեր, կրեդիտոր« պաշտոնյա անձ, որևէ պայմանագրով պատվիրատու կամ ծառայություններ սպառող կամ հանդիսանում է հիմնադիր« սեփականատեր« բաժնետեր« կրեդիտոր

զ) Մասնագետն ակնկալվող Պայմանագրից բացի ունի գույքային կամ պարտավորության իրավունք իր ծառայություններից օգտվողի նկատմամբ,

է) Մասնագետը հանդիսանում է ծառայություններ սպառողի հետ փոխկապակցված անձ:

7"9. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի և Ապահովագրողի կողմից համաձայնեցված ցանկացած կամ որոշակի աշխատանքների կատարման ժամկետով: Պայմանագիրը կարող է կնքվել մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

7"10. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Պայմանագրի կորցնելու դեպքում Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա տրվում է Պայմանագրի կրկնօրինակը« որից հետո կորցրած Պայմանագիրը համարվում է անվավեր:

7"11. Կրկնօրինակը կորցնելու դեպքում Պայմանագրի գործողության ընթացքում մյուս կրկնօրինակների տրամադրման համար Ապահովագրողն Ապահովադրից կարող է գանձել կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար վճար:

7"12. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբն ու վերջը նշվում է Պայմանագրում: Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը տարածվում է այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ համարվող ամսաթվի 00.00 ժամից մինչև Պայմանագրի գործողության ժամկետի վերջ համարվող ամսաթվի 23.59 ժամը:

7"13. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է՝

ա) Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարման պարտականության լրիվ ծավալով կատարման (լրիվ ապահովագրական գումարի վճարման) դեպքում: Ընդ որում ոչ մի լրացուցիչ փոխադարձ հաշվարկ Կողմերի միջև այս դեպքում այլևս չի կատարվում.

բ) եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական դեպքի տեղի ունենալու հավանականությունը կամ ապահովագրական ռիսկի գոյությունը վերացել է՝ կապված ապահովագրական պատահարով չպայմանավորված հանգամանքներ տեղի ունենալու հետ: Ընդ որում Ապահովագրողն այս դեպքում վերադարձնում է Ապահովադրին Պայմանագրի չլրացած ժամկետի համար ապահովագրավճարի համապատասխան մասը՝ մասհանելով Պայմանագրի կնքման հետ կապված գործավարման ծախսերը, որը կազմում է 20% ապահովագրավճարի նկատմամբ:

գ) Ապահովադրի մահվան (ֆիզիկական անձ) կամ Ապահովադրի լուծարման (իրավաբանական անձ) դեպքում՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով Ապահովադրի վերակազմակերպման հետևանքով Ապահովադրի փոփոխման դեպքում, ընդ որում այս դեպքում Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,

դ) Դատարանի կողմից Պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին վճիռն (որոշումն) օրինական ուժի մեջ մտնելու դեպքում, ընդ որում այս դեպքում ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,

ե) Համապատասխան մասնագիտական գործունեության իրականացման լիցենզիան չեղյալ համարվելու դեպքում« եթե լիցենզիան չի տրվել Ապահովադրին սահմանված կարգով կամ այն տրվել է ոչ հավաստի և ոչ լրիվ տվյալների հիման վրա, ընդ որում այս դեպքում ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,

զ) Համապատասխան մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում իրավական ակտերը խախտելու կամ այլ հիմքով լիցենզիայից զրկելու հետևանքով կամ եթե լիցենզիայի ժամկետը դադարել է Պայմանագրի գործողության ընթացքում, ընդ որում այս դեպքում ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,

է) Պայմանագրով, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:

7"14. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել ինչպես Ապահովադրի, այնպես էլ Ապահովագրողի պահանջով:

7"15. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

7"16. Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\times \frac{\quad \times 20\%}{\quad}$$

եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

7"17. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\times \frac{\qquad\qquad\qquad

ԲԱԺԻՆ 9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9"1. **Ապահովադիրն իրավունք ունի՝**

9.1.1" Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Կանոնների և Պայմանագրի պայմանների մասին,

9.1.2" Ապահովագրական պատահար տեղի ունենալու և Ապահովագրողի կողմից որպես այդպիսին ճանաչվելու դեպքում ապահովագրական հատուցում ստանալ սահմանված ծավալով և կարգով՝ համաձայն Կանոնների և Պայմանագրի պահանջների,

9.1.3" Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով սահմանված դեպքերում,

9.1.4" Փոփոխություններ մտցնել մասնագիտական ծառայություն իրականացնող անձանց ցուցակի մեջ, որոնք Պայմանագրերով ունեն համապատասխան մասնագիտական գործունեության իրականացման իրավունք: Փոփոխություններ կատարելու համար Ապահովադիրը պետք է գրավոր դիմում ներկայացնի Ապահովագրողին փոփոխությունների կատարման ենթադրվող ամսաթվից առնվազն մեկ օր առաջ: Փոփոխությունները կազմվում են Պայմանագրին կից համաձայնագրի կազմման կամ լրացման ձևով, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը,

9.1.5" Պայմանագիրը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը,

9.1.6" Պայմանագիր կնքել իր ներկայացուցչի միջոցով, որն ունի պատշաճ ձևակերպված լիազորություն,

9.1.7" Ապահովադրից (Ապահովագրված անձից) պահանջել օրենքով, այլ իրավական ակտերով և Պայմանագրով նախատեսված այլ գործողությունների իրականացում:

9"2. **Ապահովադիրը պարտավոր է՝**

9.2.1" Պայմանագրում նշված կարգով և ժամկետում մուծել ապահովագրավճարը,

9.2.2" գրավոր ծանուցել Ապահովագրողին այն բոլոր հանգամանքների մասին, որոնք կարող են հանգեցնել ռիսկի աստիճանի փոփոխության՝ այդպիսի հանգամանքների ծագման մասին իր տեղեկացվելու պահից սկսած մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

9.2.3" Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում՝

ա) անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել վնասի կանխարգելման համար, այսինքն գործել այնպես, ինչպես կգործեր, եթե իր պատասխանատվությունն ապահովագրված չլիներ,

բ) Ապահովագրողին տրամադրել վնասների հատուցման համար Ապահովադրին (Ապահովագրված անձին) ներկայացված հայցի կրկնօրինակը, տեղեկացնել Ապահովագրողին հասցված վնասների փաստի առթիվ համապատասխան մարմինների գործողությունների մասին՝ հետաքննություն, կանչ դատարան և այլն, ներկայացնել առկա նյութերը և փաստաթղթերը, մասնավորապես՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ կամ որոշում, որով հիմնավորվում է վնասի համար պատասխանատու անձի վնասի հատուցման պարտավորությունը և որոնք անհրաժեշտ են Պայմանագրով ապահովագրական հատուցում ստանալու համար,

9.2.4" պահպանել մասնագետի գործունեությունը լիցենզավորող իրավասու մարմինների և մասնագիտացված միությունների կողմից սահմանված պայմանագրի անհրաժեշտ պահանջները և կանոնները և առաջնորդվել դրանցով,

9.2.5" անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին իր գործունեության բնույթի մեջ ցանկացած տեսակի փոփոխություններ մտցնելու մասին, եթե դրանք կարող են ազդել ապահովագրական ռիսկերի մեծացման վրա,

9.2.6" իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմանագրով և Կանոններով նախատեսված այլ գործողություններ:

9"3. **Ապահովագրողն իրավունք ունի՝**

9.3.1" ծանուցել Ապահովադրին Պայմանագրի անվավերության մասին, եթե Պայմանագրի կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովադիրը դիտավորյալ հայտնել է ոչ հավաստի տեղեկություններ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք էական ազդեցություն ունեն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և հնարավոր վնասների մեծության վրա: Էական են համարվում այն հանգամանքները, որոնք որոշված են Պայմանագրով կամ նշված են Ապահովադրի կողմից Ապահովագրողին ներկայացված գրավոր հայտի մեջ,

9.3.2" իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք համարում է անհրաժեշտ վնասների նվազեցման համար, պաշտպանել Ապահովադրի իրավունքները, կատարել վնասների կարգավորմանն ուղղված գործողություններ,

9.3.3" մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը չի կատարել Կանոններով, Ապահովագրության պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված որևէ պարտավորություն,

9.3.4" ապահովադրից պահանջել կատարել օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող այլ գործողություններ,

9.3.5" իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

9"4. **Ապահովագրողը պարտավոր է՝**

9.4.1" Ապահովադրին (Ապահովագրված անձին) ծանոթացնել ապահովագրության պայմանների հետ և Պայմանագրի կնքման ժամանակ հանձնել դրանք Ապահովադրին (Ապահովագրված անձին):

9.4.2" չհրապարակել Ապահովադրի (Ապահովագրված անձի) կամ այլ անձանց առողջական վիճակի և նրանց գույքային դրության մասին տեղեկությունները՝ բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի,

9.4.3" ուսումնասիրել Ապահովադրի կողմից ներկայացված փաստաթղթերը և օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին համաձայն Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տրամադրել ապահովագրական հատուցում վճարելու կամ մերժելու վերաբերյալ եզրակացություն,

9.4.4" ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ համապատասխան եզրակացության ընդունման դեպքում օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին համաձայն Շահառուին տալ ապահովագրական հատուցում,

9.4.5" պատշաճ կերպով կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները:

ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. Ապահովագրական պատահարի կամ ցանկացած այլ դեպքի, որը կարող է հետագայում

հանգեցնել ապահովագրական պատահարի, տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է տեղի ունեցած պատահարի մասին անհապաղ, ցանկացած հասանելի և

տեղեկացման փաստը հավաստող եղանակով (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային նամակ, կարճ բջջային հաղորդագրություն և այլն) տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) Պայմանագրում նշված կոնտակտային տվյալներով՝ հեռախոսահամարներով, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում:

10.2. Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 10.1 կետում և/կամ Պայմանագրում նշված կարգով և/կամ ժամկետներում, ապա Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը,

10.3. Ապահովադիրը պարտավորվում է իր կողմից կամ իր անունից չընդունել, չառաջարկել, չխոստանալ կամ չվճարել որևէ հատուցման պահանջ՝ առանց Ապահովագրողի կողմից գրավոր համաձայնության: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով վերջինիս տրամադրել Ապահովադրի անունից պետական մարմինների կամ դատարանի առջև հանդես գալու լիազորություն, ինչպես նաև Ապահովագրողին տրամադրել վերջինիս կողմից պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

10.4. Ցանկացած պահանջ, ծանուցագիր, դատական ծանուցում կամ իրավասու մարմնի վարույթին վերաբերող փաստաթուղթ պետք է անմիջապես փոխանցվի Ապահովագրողին՝ դրանց ստանալուց հետո:

10.5. Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովադիրը և/կամ Շահառուն պետք է ներկայացնի Ապահովագրողին հետևյալ փաստաթղթերը՝

10.5.1. Պատահարի պատճառը և հանգամանքները հաստատող փաստաթղթեր՝

ա) Պայմանագիրը,

բ) վնասի հատուցման պահանջի վերաբերյալ դիմում: Շահառուն դիմումի ձևը կարող է այն ստանալ Ապահովագրողից կամ նրա ներկայացուցչից:

գ) անկախ փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),

դ) եթե ապահովագրական պատահարը կարգավորվում է դատական կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կամ դրա պատճենը,

զ) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարը կարգավորելու համար, որոնց վերաբերյալ Ապահովագրողը գրավոր պահանջ է ներկայացրել, այդ թվում՝ բուժհաստատություններից, բժշկաաշխատանքային փորձագիտական խորհրդի կողմից, սոցիալական ապահովության մարմիններից և այլն, ինչպես նաև հաշվի առնելով վնասի չափը հաստատող տեղեկանքները, հաշիվները և այլ փաստաթղթերը:

10.5.2. Վնասի չափը հաստատող փաստաթղթեր՝

ա) ֆինանսական փաստաթուղթ (հաշիվ-ապրանքագիր, հաշիվ-տեղեկանք) և/կամ տեղեկանք՝ տրված օրենսդրությամբ սահմանված կարգով նման գործունեություն իրականացնող անձի կամ կազմակերպության կողմից կամ

բ) եզրակացություն կամ ակտ կամ հաշվետվություն՝ տրված անկախ փորձագետի կողմից,

գ) առկայության դեպքում Ապահովադիրը և/կամ Շահառուն պարտավոր են ներկայացնել կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից:

ե) եթե Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ ծախսն իրականացվել է Ապահովադրի կողմից ինքնուրույն, ապա անհրաժեշտ է ներկայացնել կատարված ծախսը հիմնավորող հետևյալ ֆինանսական փաստաթղթերը.

- պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր և
- դրամարկղի մուտքի օրդեր՝ կանխիկ վճարման դեպքում կամ
- բանկի վճարման հանձնարարագիր՝ փոխանցումով վճարելու դեպքում:

10.5.3. Ապահովադրի կամ Շահառուի բանկային տվյալները՝ հատուցումը փոխանցումով ստանալու դեպքում:

10.5.4. այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության որոշումն ընդունում է Ապահովագրողը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից և վնասի չափից:

10.6. Նշված փաստաթղթերով ներկայացված վնասի չափը Ապահովագրողի համար կրում է տեղեկատվական բնույթ, և եթե Ապահովագրողը համաձայն չէ նշված վնասի չափի հետ, կամ եթե Շահառուն ի վիճակի չէ ներկայացնել վնասի չափը հիմնավորող փաստաթուղթ, ապա Ապահովագրողն իրավունք անձամբ որոշել վնասի չափը կամ դիմել անկախ փորձագետի ծառայությանը՝ վնասի չափը պարզելու նպատակով:

10.7. Սույն գլխի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

11.1. Ապահովագրական հատուցումն իրականցվում է Ապահովագրողի կողմից օրենքին, այլ իրավական ակտերին, Կանոններին և Պայմանագրին համապատասխան՝

11.2. Ապահովագրական պատահարի պատճառը և/կամ վնասի չափը որոշվում է հետևյալ կերպ՝

ա) Ապահովադրի, Ապահովագրողի և երրորդ անձի հանդեպ, ում հասցված է վնաս, կարող է ներկայացվել հայցի կարգավորման արտադատական գործընթաց, եթե առկա են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, նրա բնույթը, պատճառը և վնասի չափը անվիճելի հաստատող փաստաթղթերը:

բ) Կողմերի միջև տարաձայնությունների առկայության դեպքում՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

11.3. Ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ենթաչափի շրջանակներում՝ օրենքին, այլ իրավական ակտերին, Պայմանագրի պայմաններին և Կանոններին համապատասխան:

11.4. Ապահովագրողի համար ապահովագրական հատուցման գործընթացի սկիզբ է համարվում Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) գրավոր հայտարարությունը, որով Ապահովագրողը տեղեկացվում է, որ Պայմանագրում նշված մասնագիտական գործունեության հետ կապված վնասի հատուցման պահանջ է ներկայացվել Ապահովադրի նկատմամբ:

11.5. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է հատուցում ստանալու համար անհրաժեշտ՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափերը հավաստող փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

11.6. Այդ ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

11.7. Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

11.8. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

11.9. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

11.10. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ վնասի չափի որոշման համար նշանակել իր ներկայացուցչին: Տարաձայնությունների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետների կողմից: Այս դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող Կողմի հաշվին:

11.11. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է պատճառված վնասների մեծությամբ՝ որի համար կարող է հիմք ընդունվել դատարանի վճռով հիմնավորված և հաստատված վնասի չափը, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ենթաչափերը:

11.12. Ապահովագրական հատուցման վերջնական գումարից մասհանվում է Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը:

11.13. Եթե Պայմանագրով սահմանված է չհատուցվող գումար և մեկ ապահովագրական պատահարով հասցվել են մի քանի վնասներ« ապա չհատուցվող գումարը կիրառվում է մեկ անգամ:

11.14. Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների հանրագումարները չեն կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի չափը:

11.15. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարզվում է, որ Ապահովադրի՝ մասնագիտական պատասխանատվությունն ապահովագրված է մի քանի ապահովագրական ընկերություններում (կրկնակի ապահովագրություն), ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում Ապահովագրված անձի ունեցած բոլոր Պայմանագրերի ապահովագրական գումարների հանրագումարում իր հետ կնքված Պայմանագրին համամասնորեն, սակայն ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված մեկ ապահովագրական պատահարի գծով ապահովագրական գումարի ենթաչափը:

11.16. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

11.17. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ կամ Ապահովադրի համաձայնությամբ՝ Էլեկտրոնային եղանակով, տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):

11.18. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով կամ ուղարկվում է Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին:

11.19. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

11.20. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

ա) Ապահովադիրը կանխամտածված կերպով չի ձեռնարկել կորուստները փոքրացնելու համար անհրաժեշտ ողջամիտ և իր համար մատչելի միջոցներ:

բ) Ապահովադրի կողմից Պայմանագրի կնքման պահին ապահովագրական օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ են ներկայացվել

գ) Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության, փաստաթղթերի չտրամադրման կամ պատահարի առաջացման պայմանների, բնույթի կամ վնասի չափի որոշման աշխատանքներում նրան խոչընդոտել է Ապահովադիրը (նրա ներկայացուցիչը):

11.21. Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման վճարումից« եթե այն տեղի է ունեցել Ապահովադրի դիտավորյալ կամ կանխամտածված գործողությունների հետևանքով:

11.22. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:

ԲԱԺԻՆ 12. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

12.1. Կանոնների համաձայն չեն հատուցվում այն վնասները, որոնք արդյունք են՝

ա) մինչև Պայմանագրի կնքումը Ապահովադրին հայտնի իրադարձության կամ պատահարի, ինչպես նաև Ապահովադիրը պետք է ակնկալեր, որ դրանք կարող են հանգեցնել իր նկատմամբ հայցի առաջացմանը,

բ) Ապահովադրի և Շահառուի կանխամտածված (միտումնավոր կամ դիտավորյալ) գործողությունների, որոնք հանգեցրել են ապահովագրական պատահարի, ինչպես նաև այն գործողությունների, որոնք արդյունք են Ապահովագրված անձի և Շահառուի չարամիտ համաձայնության,

գ) մասնագիտական ծառայության մատուցման այն պայմանագրերով ստանձնած պարտավորությունների Կանոններով նախատեսված խախտման, որոնցում որպես

համապատասխան մասնագիտական ծառայության իրականացնող Ապահովագրված անձից բացի ներգրավված են նաև այլ մասնագիտական ծառայության իրականացնողներ, որոնք նախատեսված չեն Պայմանագրում,

դ) Ապահովադրին՝ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցի ներկայացման, որը ներկայացրել է Ապահովադրի կողմից ի պաշտոնե ղեկավարվող (կառավարվող) իրավաբանական կամ ֆիզիկական անձը,

ե) Ապահովադրին՝ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցի ներկայացման, որը ներկայացրել է Ապահովադրին ի պաշտոնե վերահսկողը, որի փայատեր է Ապահովադիրը կամ որի հետ առկա է փոխկապակցվածություն (բարեկամական կամ ընտանեկան կապ),

զ) Ապահովադրի գործունեության իրականացման թույլտվության կամ լիցենզիայի գործողության ժամկետի լրանալուց կամ դադարելուց հետո կամ կասեցված լինելու ընթացքում մասնագիտական գործունեություն իրականացնելիս թույլ տրված սխալների կամ բացթողումների,

է) Ապահովադրի կամ նրա աշխատակիցների կողմից կանխամտածված, անազնիվ կամ հակաօրինական գործողությունների հետևանքով Ապահովադրի դեմ հարուցված հայցերի,

ը) Ապահովադրի կամ նրա աշխատակիցների կողմից օրենքների, գերատեսչական և արտադրական կանոնների, կանոնակարգերի, նորմերի և նորմատիվային փաստաթղթերի խախտման,

թ) Ապահովադրի կամ նրա աշխատակիցների ալկոհոլի, թմրանյութերի կամ տոքսիկ ընդարմացման վիճակում գտնվելու արդյունքում (Ապահովագրողն իրավունք ունի դեպքի մասին հայտնելու պահին իրականացնել սույն կետում նշվածի ստուգում),

ժ) Ապահովադրի կամ նրա աշխատակիցների կողմից երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերից բխող Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված վնասը,

ժա) Ապահովադրի կամ նրա աշխատակիցների մոտ գործառնական, ֆինանսական վարձակալությամբ, պահպանման նպատակներով, վստահված ղեկավարման, վարձույթի հիմունքներով, գրավով կամ այլ՝ օրենքով կամ այլ պայմանագրային հիմքով գտնվող գույքի ոչնչացման (վնասման) արդյունքում,

ժբ) ցանկացած տեսքով դրամական միջոցների ոչնչացման (վնասման), կորստի արդյունքում (դրամական միջոցների կորուստ ասելով պետք է հասկանալ դրանց վնասումը, ոչնչացումը, կորուստը),

ժդ) ասբեստի և ասբեստ պարունակող ցանկացած արտադրանքի, թունավոր բորբոսասնկի, էլեկտրամագնիսական դաշտի ուժերի, կապարի, համակարգչային վիրուսների ազդեցության արդյունքում, ցանկացած կրիչների (այդ թվում է թղթային) վրայից ինֆորմացիայի կորստի արդյունքում,

ժե) Կոնստրուկցիաների, սարքավորումների կամ նյութերի բնական մաշվածության, ինչպես նաև շահագործման նորմատիվային ժամկետներից ավել օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

ժզ) Ապահովադրի՝ համապատասխան գործողության համար չլիազորված աշխատակցի գործողությունների արդյունքում պատճառված վնասը,

ժէ) անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքում (անհաղթահարելի ուժն արտակարգ պատահար է, որի վրա հասնելը չէր կարող կանխորոշվել և կանխարգելվել պարտավորությունների կատարման համար պատասխանատու անձի կողմից),

ժը) Ապահովադրի կողմից բարձր վտանգավորության աղբյուրների շահագործման կամ դրանք այլ նպատակներով օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

ժթ) Ապահովադրի կողմից արտադրության նկատմամբ համապատասխան վերահսկողության չպահպանման արդյունքում պատճառված վնասը,

ի) օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

12.2. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական պատահարներ չեն համարվում և ըստ այդմ չեն հատուցվում՝

ա) Ցանկացած պատերազմի կամ ռազմական գործողության (անկախ այն բանից դրանք եղել են հայտարարված, թե ոչ) և դրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմի, զինված ուժերի կամ ահաբեկիչների գործողության, ժողովրդական հուզումների հետևանքով պատճառված վնասները,

բ) Ռադիոակտիվ կամ այլ իոնային ճառագայթման ազդեցության հետևանքով, այդ թվում ռադիոակտիվ ալֆա, բետա, գամմա նյութերի, նեյտրոնների արտազատման, օպտիկական (լազերային), միկրոալիքային (մազերներ), կամ քվանտային գեներատորների արագացուցիչների թունավորված մասնիկներից արտազատվող ճառագայթման հետևանքով առաջացած վնասները,

գ) Ապահովադրի կողմից ապահովագրված գործունեություն իրականացնելու ընթացքում իրեն հայտնի դարձած առևտրային գաղտնիքի կամ այլ գաղտնի տեղեկատվության հրապարակելու կամ անձնական նպատակներով օգտագործելու (Ապահովադրի աշխատակիցների անձնական նպատակների օգտագործելու) հետևանքով պատճառված վնասը,

դ) Հեղինակային իրավունքների կամ այլ մտավոր սեփականության օբյեկտների բացառիկ իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասը,

ե) Ապահովադրի կողմից պատրաստվող (իրացվող, կատարվող կամ մատուցվող) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) չբավականացման (անբավարարության), ինչպես նաև այդ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ բավարար տեղեկատվության առկայության հետևանքով պատճառված վնասը,

զ) Շահառուին պատճառված վնասը, որը հետևանք է մշտական, պարբերաբար, կամ երկարատև թերմիկ ազդեցության կամ գազերի, գոլորշիների, ճառագայթների, խոնավության կամ ցանկացած, այդ թվում մթնոլորտում կշռված մասնիկների (ծուխ, փոշի և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ազդեցությունը հանկարծակի է կամ չկանխատեսված և կան ակնհայտ ապացույցներ, որ այդ ազդեցության հետևանքով վնասը անխուսափելի էր:

12.3. Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, եթե՝

ա) Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ կանխամտածված ձևով կեղծ և ապահովագրական ռիսկի գնահատման համար էական տեղեկատվություն է ներկայացել,

բ) պատահարի առաջացման վերաբերյալ Պայմանագրով և/կամ Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին չի տեղեկացվել կամ ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության կամ փաստաթղթի չտրամադրման կամ պատահարի առաջացման պայմանների, բնույթի կամ վնասի չափի որոշման աշխատանքներում Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի գործողությունների խոչընդոտման:

12.4. Կանոններով ենթակա չեն ապահովագրման հետևյալ պատասխանատվության ապահովագրության տեսակները՝

ա) Ընդհանուր (քաղաքացիական) պատասխանատվություն

բ) Գործատուի պատասխանատվություն

գ) Տնօրենների և ղեկավարների պատասխանատվություն,

ե) Պահեստավորման պատասխանատվություն,

զ) Երրորդ անձանց հանդեպ ավտոմեքենաների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվություն,

է) Արտադրված ապրանքների որակի պատասխանատվություն

ը) Աղտոտման պատասխանատվություն,

թ) Վարձակալների պատասխանատվություն:

ԲԱԺԻՆ 13. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

13.1. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ տեղյակ պահել Ապահովագրողին Պայմանագրի կնքման պահին իր կողմից հայտնած հանգամանքների իրեն հայտնի էական փոփոխությունների և այլ հանգամանքների մասին, որոնք էապես կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

13.2. Ապահովագրողը, ծանուցված լինելով այն հանգամանքների մասին, որոնք հանգեցնում են ռիսկի աստիճանի մեծացմանը (այդ թվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) մոտ քրոնիկ հիվանդությունների կամ հաշմանդամության ի հայտ գալը), իրավունք ունի պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխում կամ ռիսկի աստիճանի մեծացման չափին համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի մուծում:

13.3. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից սույն կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել դադարեցնել Պայմանագիրը և Պայմանագրի դադարեցման առնչությամբ հատուցել վնասները՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) դեմ է պայմանների փոփոխությանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի մուծմանը, ապա Ապահովագրողն իրավունք ունի օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն պահանջել Պայմանագրի լուծում:

ԲԱԺԻՆ 14. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

14.1. Ապահովագրական հատուցումը վճարած Ապահովագրողին են անցնում Ապահովադրի վնասների համար վճարված գումարի սահմաններում ապահովագրության դիմաց հատուցումը այն անձից պահանջելու իրավունքը, որը պատասխանատու է վնասների համար:

14.2. Ապահովագրողին անցած պահանջի իրավունքը իրականացվում է նրա կողմից պահպանելով Ապահովադրի և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնները:

14.3. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը, ապացույցները և հայտնել Ապահովագրողին վերջինիս անցած պահանջի իրավունքներն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր տվյալները:

14.4. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողին հասցված վնասների համար պատասխանատու անձից իր պահանջի իրավունքներից, կամ այդ իրավունքի իրականացումը անհնար է դարձել Ապահովադրի մեղքով, Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջել վերադարձնել հատուցման ավել վճարված գումարը:

ԲԱԺԻՆ 15. ԾԱՆՈՒՑՈՒՄ

15.1. Բոլոր ծանուցումները, որոնք Ապահովադիրը պետք է իրականացնի Կանոններին և (կամ) Պայմանագրի այլ պայմաններին համապատասխան, պետք է հաստատվեն գրավոր ձևով, եթե այդ ծանուցումները կատարվել են բանավոր, հեռախոսով, հեռագրով կամ այլ միջոցներով: Ծանուցման ամսաթիվ ասելով հասկանում ենք այն ամսաթիվը, որով ստացվել է ծանուցումը:

15.2. Պայմանագրի բովանդակությանը վերաբերող Համաձայնությունները, վավերական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են գրավոր ձևով:

ԲԱԺԻՆ 16. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

16.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

16.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ձայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել

Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

16.3. Կետ 16.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

16.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

16.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 16.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 17. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

17.1. Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

17.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

17.3. Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն: